

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ե .

Այխարհիս հեռարեան վրայ :

ՂԵԽԱՐՀՔԻՍ սկզբան և ինչ կերպով ստեղծուելուն վրայ եղած կարծիքները մէկիկ մէկիկ քննելը երկրաբանութեան չիյնար , հապա Ղնազանցութեան ան մասին որ Տիեզերաբանութիւն կ'ըսուի . բայց երկրաբանի մը հարկաւոր է գիտնալը թէ աշխարհքիս հնութեան վրայ ինչ կարծիքներ ունեցեր են մարդիկ , և անոնցմէ որը աւելի հաւանական կ'երևնայ . և թէ 'ի սկզբանէ հետէ ինչուան մեր օրերը ինչ փոփոխութիւններ կրած է երկիրս :

Սմանք տեսնելով որ աշխարհիս վրայ մարդիկ , կենդանիք ու բոյսեր կը ծնանին ու կը մեռնին , ու անրնդհատ մէկմէկու կը յաջորդեն , կարծեցին թէ աս կարգը 'ի յաւիտենից է կամ թէ ըսենք աշխարհքս մշտնջենաւոր է : Բայց աս կարծեաց ստուծիւնը չէ թէ միայն 'ի հաւատոց և բնազանցական պատճառներով ցուցուած է , հապա նաև երկրաբանական զննողութեամբ :

Վասն զի երկրիս այլ և այլ կարգի հողերուն մէջ , զանազան տեսակ արարածներ կը տեսնենք . և ամենէն վարի կարգին մէջ եղած գործիաւոր արարածոց մնացորդները՝ վրայի կարգերուն մէջ կամ ամենեւին չեն գտուիր կամ գտուածներուն ամենեւին չեն նմանիր . իսկ մարդու ոսկոր և մարդկային ձեռագործներ միայն վրայի կարգին մէջ կը գտուին :

Ըստ գիտողութիւններէս կը հետևի նախ թէ ուրեմն ինչպէս մարդս յաւիտենական չէ երկրիս վրայ , հապա շատ կենդանիներէ ու բոյսերէ ետքը ստեղծուած , այսպէս ալ բոլոր ուրիշ անասուններն ու տունկերը . վասն զի անոնց

մնացորդն ալ միջին կարգի հողերուն մէջ միայն կը գտուին . իսկ անկէ վար եղած հողերը ամենեւին գործիաւոր արարածոց նշան մը չեն ցուցններ : Կը հետևի երկրորդ թէ ուրեմն նոյն իսկ աշխարհքս ալ յաւիտենական չէ , հապա 'ի ժամանակի ստեղծեալ Ղստուծոյ :

Ըստ աշխարհքիս հնութեան վրայ եղած երկրորդ կարծիքն ալ աս է թէ 6500 տարուան պէտք է ըլլայ : Ըստ կարծիքն ալ թէպէտ և սուրբ գրոց խօսքին համեմատ կ'երլէ , բայց երկրաբանից մէջ ինչոր է թէ արդեօք սուրբ գրոց պատմած արարչութեան վեց օրերը ինչ մըտքով աւնելու է . և թէ Ղովսիսի ժամանակագրութիւր աշխարհքիս ստեղծմանն կը սկսի թէ մարդուս :

Երկրաբանները շատ քննութիւններով կը հաստատեն թէ Ղովսիսի հինկ օր բսածը՝ պէտք չէ նիւթական օր ըմբռնենք , հապա չորս հինկ երկայն դարեր անորոշ միջոցով մը չափուած :

Ըստ կարծիքս կը հաստատուի , նախ նոյն իսկ սուրբ գրոց խօսքերէն . վասն զի եբրայեցերէն օր՝ բաւը միայն սովորական օր չցուցններ , հապա նաև անասման ժամանակ մը դար մը : Ղարձեալ սուրբ գիրքը կ'ըսէ թէ արևն ու լուսինը չորրորդ օրը ստեղծուեցան , ուրեմն անկէ առջի եղած իրեք միջոցը արեգակնային կամ լուսնական օրով չէր կրնար չափուիլ . վարդապէտք և աստուածաբանք ալ աս կարծիքս ընդունած են : Երկրորդ իրենց կարծիքը կը հաստատեն երկրիս կարգ կարգ հողերուն գիրքէն , ու անոնց մէջ գտուած զանազան տեսակ կենդանեաց ու բուսոց մնացորդներէն , որ մէկմէկու ամենեւին չեն նմանիր . ըսել է թէ անասնոց և բուսոց

1 Ի՞՞՞նչ անակէ օր , միջոց ժամանակի , դար , ևն :  
2 Սուրբն Ագոստինոս յաղագս ծննդոց գրոց մէջ կ'ըսէ , թէ պէտք չէ վճիւ կարել աս օրերուս իսկութեան վրայօք , և պնդել թէ մեր հիմակուան օրերուն պէս էին արարչագործութեան օրերն ալ : Գիրք Գ , Թ , 44 : — Նմանապէս յաղագս Քաղաքին աստուծոյ գրքին մէջ կ'ըսէ . « Դժուարին նա մանաւանդ և անհնարին է 'ի միտ առնուլ և առաւել ևս ասել թէ զինչ էր արդեօք իսկութիւն աւուրցս » , Գիրք Թ , ԳԼ . 7 :

ստեղծուելէն ետև վրանին դարեր ան-  
ցեր է, ինչուան որ ցեղերնին բոլորովին  
հատեր է ու գեանին մէջ թաղուեր են,  
և անոնց տեղը ուրիշ տեսակ արարած-  
ներ յաջորդեր են : Արորդ ըսինք թէ  
ամենէն ստորին հողերուն մէջ ամենեւին  
մարդու ոսկոր ու մարդկային ձեռագործ-  
ներ չեն գտուիր, ըսել է թէ մարդս ալ  
չատ ետքը ստեղծուած է . և թէ որ  
սուրբ գրոց բառական իմաստին նայելով՝  
սեպէինք թէ մարդս ալ ուրիշ բուսոց և  
անասնոց հետ՝ անմիջապէս վեցերորդ  
օրը ստեղծուեր է, ան ատեն պէտք էր  
որ նոյն իսկ վարի հողերուն մէջ մար-  
դու և իրեն գործած նիւթերուն մնա-  
ցորդները՝ ուրիշ անասնոց և բուսոց  
հետ գտնուէին :

Պատճառներէն մէկն ալ երկրիս նախ-  
նական ջերմութիւնն է . վասն զի եր-  
բայ երկրաբաններուն ըսածին պէս են .  
թաղրենք թէ երկիրս առաջ բոլորովին  
բոլբոլած ու հալած նիւթ մըն էր՝  
ինչպէս որ հաւանական կ'երևնայ, ան  
ատեն անկարելի էր որ վրան բոյս բուս-  
ներ ու անասունք բնակէին . ուրեմն  
երկրիս ստեղծուելէն ինչուան պաղին  
ու դրսի մակերևութին պնդանալը՝  
չատ մը ատեն անցած պիտի ըլլայ :

Արկրաբանները աս պատճառներուս  
վրայ իրենց կարծիքը հիմնելով կ'ըսեն,  
թէ ուրեմն մարդուս ստեղծուելէն ա-  
ռաջ Սոլիսի հինկ օր ըսածը, պէտք  
է իմանանք հինկ երկայն դարեր :

Ըպա ուրեմն թէպէտ և աշխարհքս  
յաւիտենական չէ, բայց այնչափ հո-  
ղերու կարգեր ձեռնալու, այնչափ ա-  
նասնոց ու բուսոց ստեղծուելուն, ա-  
պրելուն, մեռնելուն ու բոլորովին կոր-  
սուելուն համար պէտք եղած ժամա-  
նակը հաշուելով, և միանգամայն մեր  
դարուն երկայնութեանը հետ համե-  
մատելով, երկրաբանները կ'ըսեն թէ  
պէտք է որ աշխարհքս ալ Սոլիսի  
դրած 6000 տարիէն շատ աւելի հին  
ըլլայ, և ան միջոցին շատ փոփոխու-  
թիւններ եղած ըլլան երկրիս վրայ :

Ըսանկ ալ ենթադրելով սուրբ գրոց  
ժամանակագրութեանը և Սոլիսի

դրածին ամենեւին դէմ չելլեր . վասն զի  
Սոլիսի ժամանակագրութիւնը մար-  
դուս ստեղծմանէն կը սկսի, որ իրա-  
ցընէ 6500 տարիէն քիչ աւելի է, ինչպէս  
որ ստոյգ կ'երևնայ պատմական, հնա-  
խոսական և նոյն իսկ երկրաբանական  
պատճառներով, որով մարդս ալ այնչափ  
տարի է միայն քանի որ ստեղծուած է  
և ոչ աւելի : Իսկ երկրաբաններուն  
համար ժամանակ ստեղծ-  
մանէն առաջ եղած միջոցին, կամ ա-  
րարչութեան հինկ օրուան համար է .  
որն որ հինկ դար կը բաժնենք . այսինքն

Ա . Արկրիս ստեղծման առաջին վի-  
ճակը : Ը դարուս մէջ ձեռացան եր-  
կրիս ամենէն խոր եղած ժայռի կար-  
գը, որ Պլուտոնական հող ալ կ'ըսուի,  
կրակէ առաջ գալուն համար :

Բ . Ը դարն որուն մէջ դեռ գոր-  
ծիաւոր արարածք չէին ստեղծուած .  
աս դարուս մէջ ձեռացաւ Ապտունա-  
կան կամ ջրէ առաջ եկած հողերուն  
առաջինը որ կ'ըսուի Ախնական :

Գ . Արորդ դարն է ան միջոցը որ  
երկիրս բոյսերով ծածկուեցաւ, և ծո-  
վերն ալ սողուններով . աս դարուս մէջ  
ձեռացած հողերը կ'ըսուին Սիջական  
կամ Բնոցողական ու Արկրորդական :

Դ . Վարն է, երբոր երկիրս ու վրայի  
անուշ ջրերն ալ կենդանիներով լցուե-  
ցան . աս դարուս հողն ալ կ'ըսուի Ար-  
րորդական :

Ե . Վարը մարդուս ստեղծուելէն ին-  
չուան հիմն տեւած միջոցն է . աս դարուս  
մէջ ձեռացած հողն է Արդեան ըսուածը :

Հիմա տեսնենք թէ աս ամէն մէկ  
դարուն մէջ ինչ բաներ անցեր են եր-  
կրիս վրայ . բայց որովհետև ան ատեն-  
ներէն մնացած ոչ գրուածք մը կրնանք  
ունենալ, և ոչ ուրիշ մարդկային վը-  
կայութիւն մը, որովհետև ինչուան Ե  
դար մարդ ալ չկար երկրիս վրայ, ուս-  
տի աս բաներուս վրայօք ինչուան հի-  
մա ինչ որ ալ գրուած է, և ինչ որ մենք  
ալ հիմա պիտի խօսինք, կէս մը հաւա-  
նական կարծիք է, կէս մըն ալ գործնա-  
կան դիտողութեամբ հաստատուած  
դրութիւններ :